

Հարությունյան Նարինե

Գեղարվեստական դիսկուրսի բազմամշակութայնության շուրջ

Ժամանակակից լեզվաբանության ուշադրության կենտրոնում են բազմամշակութային գիտակցության, խառնածին աշխարհահայացքի, նոր հասարակության ձևավորման խնդիր- ները, որոնք իրենց դրսևորումն են գտնում բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսում: Դրա շրջանակներում արդիական է համարվում բազմամշակութային հեղինակի անհատական լեզվական պատկերի հետազոտությունը՝ որպես որոշակի հեղինակի լեզվաբանական, արտահայտչական, եղանակավորիչ և այլ բնութագրերի ամբողջություն:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև բազմամշակութային հեղինակի անհատական ոճի “համընդհանուր” (ունիվերսալ) և “ազգամշակութային” առանձնահատկությունների, նրա հասկացութալորտի և հենքային հասկացությունների, մշակութային ինքնաճանաչման լեզվաբանական յուրահատկությունների, մշակութային առումով նշույթավորված բառապաշարի խճանկարի, ազգամշակութային իրակությունների բացահայտումը: